ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 05.02.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2021/07

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ
Մասնակից՝ «Արսեն Գրիգորյան» Ա/Ձ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԳՀԾՁԲ-ՀՎԿԱԿ-2019-69» ծածկագրով գնանշման հարցում, արխիվացման ծառայությունների ձեռքբերում

Պայմանագրի ծածկագիրը՝ «ԳՀԾՁԲ-ՀՎԿԱԿ-2019-69»

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 14.01.2021թ.-ի թիվ 26/26-1/271-2021 գրությամբ «Արսեն Գրիգորյան» Ա/Ձ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 11.01.2021թ.-ի թիվ ԱՎ/01/08.5/4-21 գրության հիման վրա, 14.01.2021թ.-ին «Արսեն Գրիգորյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձի գործը մակագրվել է 14.01.2021թ.-ին:

14.01.2021թ.-ին կայացված որոշմամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ, տրվել թիվ ՍՑ-ԼՕ-2021/07 համարի ծածկագիրը և նույն օրը հրապարակվել է www.gnumner.am կայքում:

21.01.2021թ.-ին և 05.02.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Ընթացակարգի քննությունն ավարտվել է 21.01.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 05.02.2021թ.-ին:

2. «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

«Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ն 11.01.2021թ.-ի թիվ ԱՎ/01/08.5/4-21 գրությամբ դիմելով ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնել է հետևյալը.

«Տեղեկացնում եմ, որ ԱՆ «ՀՎԿ ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և «Արսեն Գրիգորյան» ԱՁ-ի (այսուհետ՝ Կատարող) միջև 2019թ. դեկտեմբերի 04-ին կնքվել է «ԳՀԾՁԲ-<ՎԿԱԿ-2019-69» ծածկագրով պայմանագիր, սակայն վերջինս հրաժարվել է մատուցելն 1 չափաբաժնի ծառայությունը:

Ուստի «Արսեն Գրիգորյան» ԱՁ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու նպատակով ներկայացնում եմ «ԳՀԾՁԲ-ՀՎԿԱԿ-2019-69» ծածկագրով ընթացակարգին վերաբերող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի

պահանջները, կից ներկայացվել է «ԳՀԾՁԲ-ՀՎԿԱԿ-2019-69» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Արսեն Գրիգորյան» Ա/Ձ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Արսեն Գրիգորյան» Ա/Ձ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 14.01.2021թ.-ին գրությամբ դիմել է «Արսեն Գրիգորյան» Ա/Ձ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 14.01.2021թ.-ի թիվ 26/26-1/271-2021 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով հրավիրված նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացել հրավիրված նիստերին՝ չներկայացնելով նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ գրավոր դիրքորոշում:

4. <u>ՍՑ-LO-2021/07 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի և «Արսեն Գրիգորյան» Ա/Ձ-ի միջև 04.12.2020թ.-ին կնքվել է թիվ «ԳՀԾՁԲ-ՀՎԿԱԿ-2019-69» ծածկագրով պետական գնման պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

ii. Պայմանագրի թիվ 1 հավելվածի՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ ծառայությունների մատուցմա ժամկետ է սահմանվել պայմանագրի և լրացուցիչ համաձայնագրի ուժի մեջ մտնելու պահից մինչև 15.12.2020թ.-ը:

iii. Պայմանագրի 7.9-րդ կետի համաձայն՝ Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

iv. Պայմանագրի 7.13-րդ կետի համաձայն՝ պայմանագրով նախատեսված ծառայությունների մնացած մասը կկատարվի ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ լրացուցիչ համաձայնագիր կնքելու միջոցով: Պայմանագիրը լածվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում:

v. «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի և «Արսեն Գրիգորյան» Ա/Ձ-ի համաձայնագիր չի կնքվել:

vi. «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի և «Արսեն Գրիգորյան» Ա/Ձ-ի միջև 04.12.2020թ.-ին կնքված թիվ «ԳՀԾՁԲ-ՀՎԿԱԿ-2019-69» ծածկագրով պետական գնման պայմանագիրը միակողմանի լուծման մասին ծանուցումը Պատվիրատուի կողմից չի հրապարակվել տեղեկագրում՝ www.procurement.am կայքում:

5. Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 14.01.2021թ.-ի թիվ 26/26-1/271-2021 գրությամբ «Արսեն Գրիգորյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին: Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին

պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Օրենսգրքի 420-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է արխիվացման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

Պայմանագրի 2.1.3-րդ կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

Պայմանագրի 7.13-րդ կետի համաձայն՝ պայմանագրով նախատեսված ծառայությունների մնացած մասը կկատարվի ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ լրացուցիչ համաձայնագիր կնքելու միջոցով: Պայմանագիրը լածվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում:

Վերոնշյալ դրույթների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի և «Արսեն Գրիգորյան» Ա/Ձ-ի միջև 04.12.2020թ.-ին կնքված թիվ «ԳՀԾՁԲ-ՀՎԿԱԿ-2019-69» ծածկագրով պետական գնման

պայմանագիր թիվ 1 հավելվածի՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով ծառայությունների մատուցման ժամկետ է սահմանվել պայմանագրի և լրացուցիչ համաձայնագրի ուժի մեջ մտնելու պահից մինչև 15.12.2020թ.-ը:

«Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի և «Արսեն Գրիգորյան» Ա/Ձ-ի համաձայնագիր չի կնքվել:

«Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի և «Արսեն Գրիգորյան» Ա/Ձ-ի միջև 04.12.2020թ.-ին կնքված թիվ «ԳՀԾՁԲ-ՀՎԿԱԿ-2019-69» ծածկագրով պետական գնման պայմանագիրը միակողմանի լուծման մասին ծանուցումը Պատվիրատուի կողմից չի հրապարակվել տեղեկագրում՝ www.procurement.am կայքում:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ ... մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև պայմանագիր կնքած անձի էլեկտրոնային փոստին:

Պայմանագրի 7.9-րդ կետի համաձայն՝ Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ կողմերի միջև 04.12.2020թ.-ին կնքված թիվ «ԳՀԾՁԲ-ՀՎԿԱԿ-2019-69» ծածկագրով պետական գնման պայմանագիրը միակողմանի լուծման մասին ծանուցումը Պատվիրատուի կողմից չի հրապարակվել տեղեկագրում՝ www.procurement.am կայքում:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Պատվիրատուի կողմից չի պահպանվել Պայմանագրի 7.9-րդ կետի և Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի իմպերատիվ (պարտադիր) դրույթներով սահմանված պահանջը, որպիսի պայմաններում Պայմանագիր կնքած անձը չի կարող համարվել պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված (ծանուցումը ստացված), ըստ այդմ էլ պայմանագիրը չի կարող համարվել լուծված, հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 538-րդ հոդվածի 5-րդ մասի դրութները, այն է՝ պայմանագիրը համարվում է փոփոխված կամ լուծված՝ այդ մասին կողմերից մեկի ծանուցումը մյուս կողմի ստանալու պահից, եթե ծանուցման մեջ նախատեսված չէ կամ կողմերի համաձայնությամբ սահմանված չէ պայմանագրի փոփոխման կամ լուծման այլ ժամկետ:

Ուստի, նման պայմաններում, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 14.01.2021թ.-ի թիվ 26/26-1/271-2021 գրությամբ «Արսեն Գրիգորյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2021/07 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**